

368.5
Հ-11

ԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՇՈՐ ՑԵՂՉՅՈՒԻՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ

ՑԵՎ

ԶԻԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԹԲԲԴՄԸ ԵՋԻԹՑՈՒՆ ՌԱԽՄԵՐԵՆՑ

ՅԵՐԵՎԱՆ

1927

2802-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3685

Հ-11

Ա.

ԽՈՇՈՐ ՑԵՂԶՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ
ՅԵՎ.

ՀԻԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1902/10/11

ԹԱՐԴԱՐԱԿԱՆ ՊԱՌԱՐԵՆԻՑ



ՅԵՎԱՎԱՆ

1927

09 SEP 2013

44.235

ՀԱՅՈՒԹԻՒԳԱՅԻ Ի ՑԱՄԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 563
ԳՐԱԴԱՐԱՆ. 439 Բ. ՏԵՐԱԳ 5000.

ԱՌԱՋԱԲԱՆ

Մեր հանրապետության գյուղացիության անտեսության հիմքը կազմում են խոշոր յեղացուրավոր անասունները։ Նրանք տալիս են կաթ, միս, աղբ դաշտերը պարարտացնելու համար, և այլն։

Գյուղացու համար կովի կորուստը չտախողոր ցավի ե. լաց կլինեն կանայք, յերեխաները. ընտանիքի կերակրողը սատկել ե.։

Զին ու յեղը նույնպես անհրաժեշտ են գյուղացուն։ Առանց նրանց գյուղացին չի կարող իրա հողը վարել։ Զիուց և լծկանից զուրկ աղքատ գյուղացինները, իրենց վարը անելու համար, ժամանակավոր կերպով վարձում են ավելի ունեւորներից ձի կամ յեղն վճարելով բավականի գգալի գումար։

Գյուղացին գգում ե լծկանի կամ կովի անհրաժեշտությունը իրա տնտեսության համար և աշխատում և մի կերպ տնտեսել, փող հավաքել գնելու համար։ Շատ շատերին հաջողում ե ձեռք բերել վորկ և անասուն։ 1922 թվականից գյուղացու անասունների թիվը կամաց մեծանում է. Խորհրդային իշխանութ-

թյությունը ամեն կերպ ոգնում ե գյուղացիներին անասուն ձեռք բերելու գործում:

Սակայն գյուղացու անասունները շատ թշնամիներ ունեն, նրանք շատ են վնասվում զանազան վարակիչ հիվանդություններից, ժանտախտից, սիրիրախտից և այլն:

Գյուղացու անասունները սատկում են նույնպես և վոչ վարակիչ հիվանդություններից, գժրախտ պատահարներից, որինակ, սարդից ու ձորից գլորվելուց, զանազան ջարդվածքներ ստանալուց, հրդեհից, ջրում խեղդվելուց և այլն: Միայն մեկ տարվա ընթացքում 1924 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1925 թ. հոկտեմբերի 1-ը ՍԽՀՄ այն վայրերում, վորտեղ կար կոպարային պարտագիր ապահովագրություն, սատակել ելին 667.879 դլուի խոշոր յեղջյուրավոր անասուն: Յեթե հաշվելու լինենք ամեն մի սատակած անասունի դինը 50 ռուբլի (իսկ իրական գինը շատ ավելի բարձր է), կստացվի մոտ 33 միլիոն ռուբլի: Այս թե ինչքան ե կորցրել գյուղացին անասունների սատակումից են ել միայն մեր Միության մի յերկրում:

ԻՆՉՈՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Ե ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ:

Գետք ե պայքարել անասունների անկման գեմ: Ամենից առաջ պետք ե աշխատել, վորովեսզի անասունների հիվանդության դեպքերը պակասեցնել: Դրա համար անհրաժեշտ ե լավ խնամել նրանց, ձմեռը պահել տաք գոմում, լավ և կանոնավոր կերպով կերպել, իսկ հիվանդանալու դեպքում, իսկույն և յեթ դիմել անասարութին կամ անասնաբուժակին և վոչ թե զանազան «դիտունների», վորոնք յերբեք ել չեն կարող բժշկել հիվանդ անասունին:

Չնայած վերոհիշյալ բոլոր ձեռք առած միջոցներից, գժրաղտությունը այնուամենայնիվ անխուսափելի է: Յերբ գյուղացին զրրկվում ե իր անասունից, դա հավասարազոր է, մարդը առանց ձեռքի:

Ի՞նչպես պիտի ողնել գյուղացուն, յերբ սատակել ե նրա անասունը: Ողնել կարելի յեմիայն ապահովագրությամբ:

Ապահովագրությունն ե այն միակ ուղին, վորով գյուղացին վերականգնում ե իր տնտեսությունը, ստանալով սատակած անասունների վնասը:

Ի՞նչումն ե կայանում անասունների ապահովագրումը: —

Գյուղացի Պետրոսը ուզում և ապահովագրել իր կովը, դրա համար նա պետք է վճարի Պետապի գործակալին, կամ նրա դանձողին մի աննշան գումար։ Դրա վոխարեն Պետրոսը ստանում և Պետապից ապահովագրական վարձատրություն իր հիվանդությունից կամ գործքաղութեալքից ստակած անասունի համար։ Ապահովագրությունը ոգնում և գյուղացուն ձեռք բերելու կողցրած անասունի վոխարեն նորր։

Բայց միայն դրամ ստանալը և վճարելը չեն: Հարկավոր եւ հաշվառման յենթարկել բոլոր անսառունները, դրանցել այդ հատուկ ցուցակներում, կազմել տալ յուրաքանչյուր սատակած անսառունի համար ակտ, միջոցներ ձեռք առնել, վորպեսզի սատակումները չդառնան համատարած: Այդ ամբողջ գործը կատարելու համար գոյություն ունի խորհրդացյին ապահովագրություն, կամ ինչպես անվանում են «Պետական ապահովագրություն», իսկ կրծատված «Պետապապ»: Պետապը գյուղերում ունի իր գործակալները: Անսառունների պետական ապահովագրությունը սահմանված եւ դեռ 5 տարի սրանից առաջ ընկ. Լենինի ցուցմունքով: Դրա համար խորհրդել եյին նրան գյուղացիները:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄԸ ՑԱՐԻ
ՈՐՈԲ ՅԵՎ ՀԻՄԱ.

Ճարական կառավարությունը չեր բու-
ժում գյուղացիների կարիքները, չեր ապահո-

վագրում նրանց անասունները։ Եերկար տարիների ընթացքում զեմստվոյական ապահովագրությունը դյուզացուն շատ չնշին ոգուաելը տալիս։

Բոլորովին այլ կերպ ե դրված գործը հիմա: Հայ Պետապէլ 1925-26 գործառնական տարում վճարել ե գյուղացիներին, միայն 40.000 դրամ սատկած անասունների համար մոտ 800.000 ռուբլի:

Խորհրդային ապահովագրությունը ձբդ-
տում և ապահովագրել դյուզացիների բոլոր
անասունները։ Սյդ գեպքում գյուղացին և հա-
մատարած սատկումների ժամանակ կստանա-
ապահովագրական վարձատրությունը ու կրո-
ծի իր վերքերը։

Միայն 1925-26 դործ. տարվա ընթացքում խորհրդային ապահովագրությունը վճարել և սատակած խոշոր յեղջուրավոր անառունների վնաս 13.371.912 ռուբլի, իսկ ձիերի 11.196.808 ռուբլի:

Խորհրդային իշխանությունը հասուէ ու-
շաղբություն և գարձնում անսառների ապա-
հովագրության գործին և ամեն կերպ աշխա-
տում և լավացնել ու զարգացնել այդ գործը:

ՊԱՐՏԱԴԻՐ ՅԵՎ ԿԱՄԱԼՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒ-
ԹՑՈՒՆ.

Անառունների ապահովագրությունը լինում է պարտադիր և կամավոր։ Եթե զորեն

յիշանում սահմանված ե խոշոր յեղջուրավոր
անասունների պարտադիր ապահովագրու-
թյուն, ապա ուրեմն այդ շըջանի բոլոր խոշոր
յեղջուրավոր անասունները պետք ե ապահովա-
գրված լինեն պարտադիր կերպով: Այլև ամեն
մի գյուղացի չեն հարցնի թե նա ցանկանում
ե ապահովագրել իր անասունը, թե վո՞չ. նա
պետք ե յենթաքիվի սահմանված պարտադիր
ապահովագրության:

Բոլորովին այլ բան ե կամավոր ապահո-
վագրությունը: Այդ դեպքում յուրաքանչյուր
գյուղացի ինքն ե վճռում, թե հարկավոր հ
ապահովագրել իր անասունը թե վո՞չ: Կցան-
կանա, կապահովագրի, չի ցանականա, չի ա-
պահովագրի, ահա թե ինչո՞ւ այդ ապահո-
վագրությունը կոչվում ե կամավոր:

Յեթե ապահովագրությունը դարձնել
միայն կամավոր, կստացվի հետեւյալը.—մեկը
չի կարող հարկավոր փողը հավաքել, մյուսը
կմոռանա ժամանակին մուծումը կատարել,
իսկ յերրորդը հույսը գնելով «աստծու» վրա և
չի ապահովագրի: Իսկ փորձանքը գալու դեպ-
քում, յերբ կսկսվի անասունների համատարած
սատակումը, հաղարով կը կոտորվեն անասուն-
ները, վնասված տնտեսությունները վոչինչ
չեն ստանա պետությունից:

Այլ բան ե պարտադիր ապահովագրու-
թյունը: Պարտադիր ապահովագրությամբ
գյուղացու թե խոշոր յեղջուրավոր անասունը
և թե ձիերը, ջորիները, ուղտերը և եշերը հա-

մարվում են ապահովագրված, անկախ նրանից
կարողացել ե նա իր ժամանակին մուծել ապա-
հովագինը, թե վո՞չ, միւնույնն ե նրա անա-
սունը ապահովագրված է:

Ուստի խորհրդային իշխանությունը վո-
րոշել ե սահմանել պարտադիր կոպարային և
կամավոր ապահովագրություն: Պարտադիր ա-
պահովագրությունից գանձվում ե գյուղացի-
ներից աննշան գումարներ և վնասի դեպքում
նույնպես վճարում ե չնչին գումար: Իսկ կա-
մավոր ապահովագրությամբ, յուրաքանչյուր
գյուղացի ապահովում ե իրեն, վճարելով լրա-
ցուցիչ ապահովագրության համար լրացուցիչ
ապահովագին:

Անասունների ապահովագրությունը ինչ-
պես մենք կտեսնենք հետո, շատ աժան գործ ե:

Ապահովագրական հասակի անասունների
համար, յուրաքանչյուր գլխին վճարում են
ընդամենը 34 կոպեկից մինչև 1 ռուբ. 34 կոպ.,
մեկ տարում:

Ի՞նչպես են վերաբերվում գյուղացիք ա-
նասունների պարտադիր ապահովագրության:

Գավառական խորհուրդների և զավառա-
կան գործկոմների համագումարները միշտ ել
արտահայտվել են հոգուտ անասունների պար-
տադիր ապահովագրության. նույնիսկ գյու-
ղացիներից մեկը գրում ե, ներկայում նկատ-
վում ե անասունների համատարած սատակում,
հաճախ տիվյալ տնտեսության վերջին անասունն
ե սատակում: Կարող ե արդյոք չքավոր գյու-

դացին ձեռք բերել սատակած անասունի փոխարեն նորը, յեթե նրան չողնի պետական ապահովագրությունը, ի հարկե վոչ:

ԱՆՍՍՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄԸ

Ի՞նչքան են վերցնում գյուղացուց անասունների պարտադիր ապահովագրության համար ապահովագին և ի՞նչքան են վճարում նրան անասունը ընկնելիս:

Պետք ե ընդմիշտ գիտենալ, վոր գյուղացուց անասունների համար վերցնում են ապահովագին վորոշ ու ճիշտ հաշվարկով: Այդ հաշվարկը կատարվում է հետեւյալ ձևով.—Յենթագրեք նորագավիթ գյուղում կտ 100 գլուխ կով, բոլոր այդ կովերը ապահովագրված են պարտադիր կերպով: Քա՞նի անասուն և սատկում այդ գյուղում մեկ տարում: Իհարկե սատկած կովերի թիվը տարբեր կլինի, տարբեր տարիներմ, բայց միջին թվով, մեկ տարում սատակում ե 5 անասուն (կով): Պետք ե վճարել այդ անասունների վնասը, յուրաքանչյուր գլուխն 30 ռուբլի, ընդամենը 5 կովի համար 150 ռուբլի:

Վո՞րաեզից վերցնել այդ փողերը: Այդ փողերը, 150 ռուբլին գանձվում ե, այդ բոլոր 100 կովատերերից, 100 կովի համար կովատերը պիտի վճարեն ապահովագին ընդամենը 123 ռուբլի, յուրաքանչյուր կովի համար 1 ռ.

23 կոպեկ: Կորելի յե հաշվել, վոր գյուղացին վճարում ե, վոչ թե ապահովագին, այլ ի հաշվվ այն ստանալիք 30 ռուբլու, վոր տալիս ե Պետապը ստակման գեղքում: Ուրեմն գյուղացին, վոր այդ 30 ռուբլուց, 10 ռուբ: դեմաց մուծում ե տարեկան 41 կոպեկով: Այդ 41 կոպեկին պիտի ավելացնել Պետապի աշխատակիցների և գրասենյակի ծախքը 3 կոպեկով: Հետեապես ամեն մի գյուղացի իր ապահովագրած անասունի ստանալիք 10 ռուբլու համար մուծում ե տարեկան 44 կոպեկով: Այդ գումարից պակաս գյուղացուց վերցնել անկարելի յե, վորովհետեւ հակառակ պարագայում փողը չի բավականացնի վճարելու բոլոր վնասները սատակումից:

Շատ հաճախ գյուղացիները իրենց նամակներով հարցնում են «չի կա՞րելի արդյոք անասունների ապահովագրումը աժանացնել»: Վո՞չ, չի կարելի: Խորհրդային ապահովագրությունը չի ձգտում յերեք շահ ստանալու:

Ապահովագրությունը ներկայումս պետական ե, խորհրդային, նա վերցնում է գյուղացուց այնքան փող, վորքան անհրաժեշտ և վճարելու նրա վնասը և ծածկելու գործավարության ծախքը և ունենալու պահեստի դրամագլուխ, անասունների համաճարակը լուծարելու:

Հետեապես վորքան մեծ և անասունների տնկումը, այնքան բարձր և ապահովագինը և

ընդհակառակը, վորքան վորքը և անասունների
անկումը, այնքան աժան և ապահովագինը:

Բայց անասունների անկումը, զանազան
տեղերում տարբեր և լինում: Յերկու տարվա
հաշվառումը ցույց է տալիս, վոր խոշոր յեղ-
ջուրավոր անասունների անկումը Հայաստա-
նում ավելի մեծ է, քան մյուս յերկրներում,
հետեւամես Հայաստանում յեղջուրավոր անա-
սունների ապահովագինը ավելի բարձր է, քան
մյուսաստանում:

Զիերի անկումը ավելի մեծ է, քան յեղջու-
րավոր անասունների, դրա համար ել ձիերի
ապահովագինը ավելի բարձր է, քան թե անա-
սունների: Զիերի ապահովագին բոլոր նահանգ-
ներում սահմանված է 10 ոռոբլու դիմաց 60
կոպ. 1 տարում: Ուրեմն յեթե ձին ապահովա-
գրված է պարտադիր կերպով 40 ոռոբլով, ապա
դյուզացին պետք է մուծի նրա համար ապա-
հովագին, տարեկան 2 ռ. 40 կոպ.: Աւղտերի,
եշերի, ջորիների համար նույնպես վերցվում
է 10 ոռոբլու դիմաց 60 կոպ. մեկ տարում:

Պարտադիր ապահովագրության ապահո-
վագների մուծման ժամկետ սահմանվում է
հունվարի 1-ը:

ԶՔԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՏՐՎԵԼԻՔ ԱՊԱ-
ՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խորհրդային իշխանությունը դյուզացի-
ներին տրամադրում է անասունների ապահո-
վագրության արտոնություններ:

Դետական ապահովագրության 3 տարվա
ընթացքում նկատվում եր, վոր գյուղացիների
վրա կուտակվում եր հետնույթ: Ի՞նչից եր գո-
յանում այդ հետնույթը, չվճարողների թվում
կային նաև կուլակներ, վորոնք կարող ենին վճա-
րել, բայց չեյին ցանկանում: Նրանք ասում ե-
յին «Պետապին տված ոռոբլին մեռյալ է, յես
նա շրջանառության մեջ կառնեմ և այդ ոռոբ-
լին ինձ նորանոր ոռոբլիներ կտա»: Բայց չքա-
վորների թվում կան նաև միջակներ և չքավոր-
ներ, վորոնք հաճախ հնարավորություն չու-
նեն ապահովագինը վճարելու:

Ունեոր չվճարողների վրա բարդվում եր
տույժ, վորքան ուշացնում է մուծումը, սահ-
մանված ժամանակից հետո, այնքան ավելի յի
բարդվում տույժը:

Յուրաքանչյուր ոռոբլուն, սահման-
ված ժամկետից ուշ վճարելու համար վերցըր-
վում է տույժ, 5 որվա համար 1 կոպեկ, կամ
1 ամսվա համար 6 կոպեկ: Յեթե վճարելու յեր
1 ոռոբլի և ուշացըրել է 2 ամսով, ապա նա պիտի
վճարի, վոչ թե 1 ոռոբլի, այլ 1 ոռոբլի 12 կո-
պեկ:

Ապահովագրական կոպարային վճարում-
ները յեթե սահմանված ժամկետին չեն մուծ-
վում (մինչ հուվարի 1-ը) բռնագանձվում են
վարչական կարգով, բարդելով վրան տույժ:

Ի հարկե կարիք չկա վճարումները ձգձր-
գելու. միենույն և վաղ թե ուշ պիտի վճարել,

աղա ավելի լույլ և վճարել իր ժամանակին, առանց տույժի:

Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի վրոշմամբ, գյուղացիության տրամադրվում է արտօնություններ, աղատելով նրանց աղահովագրական վճարումներից լրիվ, կամ մասնակի չափով: Արտօնություն տրվում է.

1) Ամենաչքավոր կամ տարբերային դժբաղադրությունից քայլայված տնտեսություններին: 2) Կարմիր բանակայինների ընտանիքներին: 3) Գաղթականներին կամ վերաբնակիչներին և 4) կամավոր հրդեաշեջ կազմակերպություններին:

Նրանք թեև չեն վճարելու կամ վճարելու յեն շատ չնշին գումար ապահովագին, միենույն ե, նրանք կստանան դժբաղադրության գեղքում ապահովագրական վարձատրություն: Սակայն արտօնության ընդհանուր գումարը չպետք է վերազանցի հաշվարկի ընդհանուր դումարի 10 տոկոսից:

Քաղաքի չքավոր բնակչությունը և կարմիր բանակայինների ընտանիքները նույնպես աղատվում են անասունների պարտադիր կողարային ապահովագներից: Բայց զինման գումարը 5 տոկոսից ավելի չպետք է լինի, անասունների կողարի հաշվարկից: Եթե որինակ, վորևե գավառական քաղաքի բնակչությունից պետք է գանձել անասունների 1000 ռապահովագին, ապա կարելի յե այդ բնակչությունը աղատել վոչ ավելի 50 ոուբլուց:

Գրոֆմիության անդամներին, բանվորներին և ծառայողներին, սովորական ապահովագրությամբ աղբազներին, կամավոր հրդեաշեջ խմբերի անդամներին և տնայնագործ միակներին, քաղաքներում տրվում է զեղջ, ըստ խոչոր յեղջուրավոր անասուններից 10 տոկոս, ձիերի, ուղարերի, ջորիների և եշերի 5 տոկոս: Դա նշանակում է, վոր քաղաքացին անասունի համար վճարելիք մի ոուբլու դիմաց պիտի վճարի 90 կոպեկ, 50 կոպեկի փոխարեն 45 կոպ., իսկ ձիերի, ուղարերի, ջորիների և եշերի համար մի ոուբլու փոխարեն 95 կոպեկ:

ԸՆԿԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎԵԼԻՔ ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ ՎԱՐՉՏՎՈՒԹՅԱՆ ԶԱՓԲ.

Ըստ պարտադիր ապահովագրության, յուրաքանչյուր յերկրի համար, ամեն մի անասուն աղահովագրվում է միևնույն գումար: Այդ նշանակում է. որինակ յեթե մի դյուզացու կովը արժե 60 ոուբլի, մյուսինը 30 ոուբլի, միևնույնն ե, յեթե այդ կովերը սատկելին, տերերը կստանան հավասարաշափ ապահովագրական վարձատրություն, վորովհետև նրանք մաւծել են նույնպես հավասարաշափ ապահովագին: Միանման վճարողին, միանման ել վարձատրություն:

Հայաստանում խոչոր յեղջուրավոր անասունների համար, Պետապր վճարում է, ապահովագրական վարձատրություն, կովերի,

յեղների և մատակների համար, յուրաքանչ-
յուր գլխին 30 ռուբլի, զոմեշի համար 50
ռուբլի, ձիերի՝ 40 ռուբլի, ջորիներ՝ 40 ռուբ-
լի, ուղտեր՝ 50 ռուբլի և եշերի՝ 15 ռուբլի:

Գյուղացիները հաճախ Պետապի գործա-
կալին հարցնում են «Դա ի՞նչ արդարություն
է, իմ կովը արժե 100 ռուբլի, իսկ գուք նրա
սատակման գեպօւմ վճարում եք 30 ռուբլի:
Մի՞թե յես կարող եմ 30 ռուբլով նոր կով
գնել»: Այդորինակ հարցեր տալիս են նաև ձիա-
տերերը: 30 ռուբլով իհարկե կով չի կարելի
դնել, իսկ յեթե յուրաքանչյուր կովը ապահով-
վագրվեր 100 ռուբլիով դժգոհների թիվը շատ
մեծ կլիներ: 30 ռուբ. ապահովագրման գեպ-
օւմ, անասնատերը վճարում է գլխին 1 ռ. 23
կոպեկ, իսկ յեթե ապահովագրված լիներ 100
ռուբլով, այն ժամանակ պիտի վճարեր, այդ
կովի համար 4 ռուբլի: Այդպիսի ապահովա-
գրությունը ձեռնտու յե միայն ունենորներին:

Պարտադիր կոպարային ապահովագրական
գումարի չափը վորոշելիս, պետք ե հարմա-
րեցնել գյուղացիական միջակի և չքավորի շա-
հերին և վոչ թե ունենորների, չե վոր միջակ-
ների և չքավորների թիվը գյուղում կազմում
և ձնչող մեծամասնություն և հենց ներկայումս
ել գյուղացիական այդ տարրերի վրա, կա կու-
տակված բավականաչափ ապահովագրական
հետնույթ:

Խորհրդային իշխանությունը շատ արդա-
րացի յե վարդում. նա գիտե, վոր մեր գյու-

ղացին գեռես աղքատ ե. մեծ ապահովագներ
վճարելու նրա ուժը չի պատի: Ահա թե ինչու
գյուղացիներից վերցվում ե, ըստ կոպարային
պարտադիր ապահովագրության չնչին ապա-
հովագին. ինչպես և վնասի դեպքում արվում,
վոչ խոչոր գումար, մոտավորապես փաստա-
կան արժեքի $\frac{1}{3}$ -րդ մասը:

Յեթե վորևէ անասնատեր ցանկանում է
ապահովագրել, իր կովը կամ ձին, նա և այժմ
ել կարող է այդ անել, ըստ կամավոր լրացու-
ցիչ ապահովագրության:


Ել ի՞նչ ե ՀԱՐԿԱՎՈՐ ԳԻՏԵՆԱԼ ԱՆԱՍՈՒՆ-
ՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ.

Պարտադիր կոպարային ապահովագրու-
թյամբ, ապահովագրվում են խոչոր յեղուրա-
վոր անասունները $1\frac{1}{2}$ տարեկանից, ձիերը
 $2\frac{1}{2}$ տարեկանից:

Հաճախ պատահում ե, վոր գյուղացին իր
սատակած $1\frac{1}{2}$ տարեկան հորթի համար, գոր-
ծակալից պահանջում ե ապահովագրական
վարձատրություն:

Գործակալը բացատրում ե նրան, վոր հոր-
թը ապահովագրված չե, սակայն գյուղացին չի
հավատում առարկելով. «Բնչու յերբ կենդանի
յե ապահովագրված ե, իսկ յերբ սատակել ե ա-
պահովագրված չե, խարել են ուզո՞ւմ»:

Բայց իրականում վոչ մի յարեւթյուն
չկա, հորթերը մինչեւ $1\frac{1}{2}$ տար ձիերը



2½ տարեկան հասակը չեն ապահովագրված և
դրանց համար ապահովագին չի մուծվում:

Գյուղացին ստանում ե ապահովագրական
վարձատրություն զանազան հիվանդություն-
ներից, կամ դժբախտ դեսպերից (գաղանների
պատառութելուց, հրդեհից, կայծակահարու-
թյունից) ստահած անասունի համար:

Կարող ե պատահել, վոր անասնաբուժը տ-
ռաջարկի գյուղացուն մորթել իր հիվանդ անա-
սունը, վորը վարակված ե վարակիչ հիվան-
դությամբ և կարող ե վարակել առողջներին:
Այդպիսի դեմքերում Պետապը վճարում ե վո-
նասը:

Իսկ յեթե գյուղացին իր առողջ անասունը
մորթում ե, վորպես մասցու, իհարկե Պետա-
պը նրան ապահովագրական վարձատրություն
չի վճարում:

Յեթե անասունը հիվանդ ե անբուժելի հի-
վանդությամբ, և վոչ մի բանի պիտանի չե,
անասնատերը կարող ե մորթել, վորպեսզի ա-
վելորդ չկերակրի նրան: Այդպիսի վնասը Պե-
տապը վճարում ե լրիվ կերպով, պայմանով
սակայն, վոր անասնաբուժը կամ անասնաբու-
ժակը մինչեւ անասունի մորթելը տա իր յեղ-
րակացությունը, հիվանդության անբուժնու-
թյան մասին:

Գյուղացիները իրեց նամակներով հա-
ճախ խնդրում են, վոր Պետապը ապահովագրի
ձիերը և յեղջուրաւոր անասունները նաև գո-
ղության դեպքերից, ձիագողություն և անաս-

նագողությունը գյուղացիության համար կա-
տարյալ չարիք ե: Սակայն Պետապը չի կարող
ապահովագրել, վորովհետեւ հաճախ կլինեն
չարամառություններ: Դժվար չի գյուղացու
համար յերբեմն կազմակերպել դիտավորյալ
գողություն, ստանալ ապահովագրական վար-
ձատրությունը և կիսել գողի հետ:

Մեծ մասամբ գողացված ձիերը և անա-
սունները գտնվում են վորոշ ժամանակից հետո:
Պործակալը չի կարող հետեւիլ, գողացված ու
հետ գտնված անասունները և շատ դժվար կլի-
նի հետ պահանջել ապահովագրական վարձա-
տրությունը. անասնատերը այդպիսի դեմք-
քերում կ'ուտվի թե իր անասունով և թե ապա-
հովագրական վարձատրությամբ: Ահա այդ
պատճառով Պետապը չի վճարում ապահովա-
գրական վարձատրություն գողացած անասու-
նի համար:

Անասնատիրոջ բոլոր անասունները պետք ե
ցուցակագրված լինեն: Ցուցակագրության հա-
մար կազմվում են հատուկ ցուցակներ, ուր
գրվում ե, թե ով, վորքան անասուն ունի: Այդ
ցուցակները վերջնականապես ստուգվում են
գյուղական ժողովում, անասնատիրոջ հար-
ցուղական ժողովում, անասնատիրոջ հար-
ցանությամբ: Ահա այստեղ պետք ե գյու-
ղացիները հետեւին, վոր բոլորը ցույց տան
իրենց անասունների քանակը, ձիշտ կերպով:

Յեթե ցուցակագրությունից հետո, տվյալ
տնտեսության մեջ ավելանում կամ պակասում
ե վորեվե անասուն, տերը այդ մասին անպայ-
ման պիտի հայտնի գյուղխորհրդի նախագահին

կամ պետապի գործակալին, վերցնելով նրանից համապատասխան վկայական:

ԽՈՐՀԻԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ:

Մենք արդեն տեսանք թե ի՞նչ նշանակություն ունեն ապահովագրական գործում անասնաբուժները և անասնաբուժակները։ Անասնաբուժական գործը մեզանում դեռ ևս այնքան ել լավ չի դրված։

Շատ տեղերում նույնիսկ չկան անասնաբուժներ կամ անասնաբուժակներ։ Հայաստանին անհրաժեշտ ե մոտավորապես 50 անասնաբուժ, սակայն կա միայն 20 հոգի։ Հաճախ այդ անասնաբուժները չեն ունենում հարկավոր դեղորայք և անհրաժեշտ գործիքներ։

Խորհրդային իշխանությունը աշխատում է, վոր անասունների անկումը պակասի։ Խորհրդային ապահովագրությունը նույնպես յուր կողմից դրամներ ե բաց թողնում, անասնաբուժական գործի համար դեղորայք կամ գործիքներ գնելու և սրսկելու։

Հայաստանի մի քանի գավառներում պատահում են դեպքեր, վոր գաղանները պատռութում են անասուններին։ Անհրաժեշտ ե վորչընչացնել այդ գաղաններին։ ուստի Պետապը վարձատրում ե այն վորսորդներին, վորոնք վոչչացնում են գաղաններին, վճարելով յուրաքանչյուր գայլի համար 3 ռուբլի։

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պարտադիր կոպարային կարգով ապահովագրված անասունի սատակած դեպքում, ապահովագրվողը ստանում է մոտավորապես նրա փաստական արժեքի մոտ ^{1/3}-րդ՝ մասը Այդպես ե արվում, վորպեսզի դյուզացիներից մեծ ապահովագին չգտնվի։ Սակայն լինում են այնպիսի ուժեղ տնտեսություններ, վորոնց համար միայն կոպարային ապահովագրությունը բավական չե։ Նրանք ուզում են ապահովագրել իրենց անասունը լրիվ գնով։ Ահա այդ կարելի յե անել լրացուցիչ ապահովագրությամբ։

Այդ ապահովագրությունը կոչվում ե նաև կամավոր, վորովհետեւ բացառապես կախված է դյուզացու բարի կամքից, կցանկանա կապահովագրի, չի ցանականա չի ապահովագրի։

Կամավոր ապահովագրությունը լինում է 2 տեսակ լրացուցիչ—կոպարային և զուտ կամավոր։ Գյուղացիության համար եական նշանակություն ունի լրացուցիչ ապահովագրությունը, վորի մասին կ'խոսենք ավելի մանրամասն։

Լրացուցիչ ապահովագրությամբ նույնպես չի կարելի անասունը ապահովագրել իր լրիվ արժեքով։ Ինչո՞ւ յե սահմանված այդպիս հրահանգ կանոն։ Հարկավոր ե ավելի մանրամասն ծանոթանալ այդ հանդամանքի հետ։

Խոշոր յեղջյուրավոր անասունների և ձիերի գինը յերբեմն բարձրանում է, յերբեմն իջնում: Աշնանը անասունների գինը ավելի ցածր է քան թե զարնանը, իսկ յերաշտի դեպքում, անասունների գինը բավականին ընկնում է:

Որինակ, գյուղացին գնել ե զարնանը մի կով և ապահովագրել լրիվ արժեքով՝ 100 ռուբրով: Աշնանը նույն վայրում, այդ կովը կարծենա 60 ռուբրի: Բնական է, վոր անասունատերը վատ կերակրի այդպիսի կովը, խնամք չըտանի բոլորովին և հասցնի մինչեւ սատակումն ու համաձայն ապահովագրության ստանա ապահովագրական վարձատրությունը՝ 100 ռուբրովն: Անասունատերը ստանալով 100 ռուբրին, 60 ռուբրով կ'դնի մի այդպիսի կով, իսկ 40 ռուբրովն կ'դնի զրպանը: Վորպեսդի այդպիսի դեպք չկատարվի, խորհրդային իշխանությունը առջադրում է հետեւյալ միջոց:

Հսոր լրացուցիչ ապահովագրության, խոր յեղջյուրավոր անասունները և ձիերը յերեք չեն ապահովագրվում իրենց լրիվ արժեքով, Անպայման անասունի արժեքի մի մասը պիտի թողնել անասնատիրոջ վրա, վորպեսդի նու իր հերթին անասունին լավ խնամի և հույսը չ'դնի միայն ապահովագրական վարձատրության վրա:

Լրացուցիչ ապահովագրությամբ անասունը պիտի ապահովագրել այնպիսի գումարով, վոր ավելի չ'մինի կոպարային ապահովագրություն:

Թյան ապահովագրական վարձատրության հետ միասին, իրական արժեքի չ'ենց:

Լրացուցիչ կերպով կարելի յե ապահովագրել միայն այն անասունները, վորոնք ապահովագրված են կոպարային կարգով: Յեթե մի վորեվի վայրում չի սահմանված կոպարային ապահովագրություն, ապա կարելի յե ապահովագրել վոչ թե լրացուցիչ կարգով, այլ զուտ կամավոր կերպով:

Լրացուցիչ ապահովագրությամբ կարելի յե ապահովագրել տվյալ տնտեսության բոլոր անասունները, կամ միայն բոլոր կովերը, կամ բոլոր յեղները (առանց հորթերի): Որինակ զյուղացի Սարգսյանը ունի 3 կով և 2 յեղ: Նա կարող է լրացուցիչ կերպով ապահովագրել կամ բոլոր անասունները, կամ 3 կովը կամ 2 յեղը: Նա անդայման պետք ե ապահովագրի, կամ բոլոր կովերը, կամ բոլոր յեղները:

Ինչու յե այդպիս սահմանված, յեթե Սարգսյանի բոլոր կովերը կամ յեղները ապահովագրված չ'ինեն, սատակման դեպքում, նա կարող է միշտ ել պնդել, թե հենց այդ սատակածն ե յեղել լրացուցիչ ապահովագրվածը: Լրացուցիչ ապահովագրությամբ կարելի յե ապահովագրել, կամ բոլոր ձիերը, կամ բոլոր արու (վորց), կամ բոլոր եղ ձիերը (մադյան):

Լրացուցիչ կերպով ապահովագրվում են միայն առողջ անասունները, հիվանդները չեն ապահովագրվում:

Զիերը և ուղտերը ապահովագրպում են լրացուցիչ կարգով, վոչքարձր 15 տարեկանից:

Հաճախ գյուղացիները գրում են «Յես ապահովագրել եմ իմ կովը, լրացուցիչ կերպով հունվարի 5-ին. 5-ին ել վճարել եմ ապահովագինը լրիվ կերպով և ստացել անդորագիրը: Կովս սատկել ե հունվարի 12-ին, իսկ ինձ ապահովագրական վարձատրություն ինչո՞ւ չեն վճարում»:

Այդպես ել պիտի լինի, վորովհետեւ ապահովագրական կանոնների համաձայն, ապահովագրական վարձատրությունը տրվում է այն դեպքում, յեթե անկումն տեղի յե ունեցել, ապահովագրությունից 15 որ հետո: Կովը ապահովագրված եր հունվարի 5-ին: Պետական ապահովագրությունը վճարում է նրա վնասը վոչ ուշ հունվարի 20-ից: 15 որվա ժամկետը սահմանված է նրա համար, վորապեսզի դիտավորյալ կերպով, դեռ ևս չպարզված հիվանդանասունը չ'ապահովագրվի:

Իսկ յեթե լրացուցիչ կերպով ապահովագրված անասունը սատակում է դժբախտ պատճուից, որինակ ընկել ե գնացքի տակ, Պետակի պատասխանատվությունը համարվում է անմիջական, վնասը վճարվում է ժամկետից չուտ: Որինակ գյուղացին ապահովագրեց, լրացուցիչ կարգով իր կովը հունվարի 8-ին, իսկ հունվարի 10-ին կովը ընկալ գնացքի տակ, կամ կայծակահար յեղալ, այդ դեպքում Պետակի վճարում է վնասը:

Վորապեսզի լրացուցիչ կերպով ապահովագրություն կ'նքվի, անասնատերը պիտի հայտնի Պետապի գործակալին, մուծի ապահովագինը և ստանա նրանից անգորբագիր: Անասնաբուժը չի քննում այդ ապահովագրվող անասունը, այլ միայն զննում ե պետապի գործակալը: Նըշանակում ե լրացուցիչ կերպով կարելի յե ապահովագրել ամեն ժամանակ:

Ապահովագրությունը կ'նքվում է մեկ տարով: Արինակ դեկտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 1-ը, կամ հունվարի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Զիերի լրացուցիչ ապահովագրության ապահովագինը լինում է զանազան. չափով: Վորքան ձին մեծ ե, այնքան մահացությունը չատե, ուստի ձիերի լրացուցիչ ապահովագրության վճարումների չափը պայմանավորվում է նրանց տարիքով:

Լրացուցիչ ապահովագրությունը անասունների և ձիերի սատիճանաբար զարգանում է: Այսպես որինակ 24-25 գործնական տարում լրացուցիչ կերպով, խոշոր յեղջյուրավոր անասուն ապահովագրված եր 423372 դլուխ, իսկ ձիեր 52,159 դլուխ: Այս թվերը դեռ ևս մեծ չեն, բայց նրանք սատիճանաբար մեծանում են:

Մեր գյուղացիությունը դեռ ևս աղքատ ե և չ'այսած վոր լրացուցիչ ապահովագրության ապահովագինը շատ մեծ չե (կ. վը, յեղը 1 ոուրլի, ձին 2-3 ոուրլի), բայց և այնպես, շատերի ուժը չի պատում:

Արացուցիչ ապահովագրությամբ ապահովագրում են իրենց անասունները, ունեվորդյուղացիք, չքավորները դեռ ևս քիչ են ողտը վում այդ ապահովագրությամբ:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԿՈԼԼԵԿՏԻՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

Ամեն մի գործ ավելի ձեռնտու յե կատարել միասին արտելով, քան թե անհատապես. նույնը և անասունների ապահովագրության գործում: Այդ գեղքում բավական ե մի քանի անասունատերեր, ընտրեն իրենց ապահովագրության դործին ներկայացուցիչ, վորը վարում ե այդ ապահովագրական ընկերության բոլոր ապահովագրական գործերը:

Այդպիսի ապահովագրությունը կոչվում է կոլլեկտիվ: Կոլլեկտիվի անասունների թիվը պետք ե լինի վոչ պակաս 10-ից:

Կոլլեկտիվի ներկայացուցիչը դանձում է բոլորից ապահովագրական ապահովագինը և հանձնում է Պետապի գործակալին. նա հետեւ վում ե, վնասների վճարման գելքում Պետապի կանոնների ճիշտ կատարմանը:

Կոլլեկտիվ ապահովագրության արտոնությունը այն ե, վոր Պետապի պատասխանատվության ժամկետը, վոչ թե 15 որից հետո յե, այլ 7 որից հետո, ըստ լրացուցիչ ապահովագրության:

Ի՞նչ գիտի Անել ԱնԱՍՈՒՆՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՊՈՒՄ:

Եեթե գյուղացու անասունը հիվանդանում ե նա պարապոր ե անմիջապես հայտնել անասնաբուժին, կամ անասնաբուժակին: Ըստ գործում ապահովագրված ե թե չի ապահովագրված անասունը:

Հաճախ հիվանդությունը կարող ե լինել վարակիչ: Խոկ վարակիչ հիվանդությունը հետությամբ մի գոմից կարող ե անցնել մյուսը, չապահովագրվածից անցնել ապահովագրվածին և վարակել:

Փանտախտը, սիրիոզախտը հնձում են անասուններին, առանց տարբերելու, չապահովագրվածը ապահովագրվածից:

Շատ տեղերում, անասնաբուժը կամ անասնաբուժակը գտնվում է 60-ից մինչեւ 80 մերստի վրա, պարզ ե, վոր գյուղացուն այդ գելքում շատ գժվար ե հայտնել անասունի հիվանդության մասին: Այդպիսի գելքում նա միայն կարող ե հայտնել Պետապի գործակալին:

Անասունի հիվանդության գելքում, նրան բժիշկը համար, գյուղացին պարտավոր ե կատարելու անասնաբուժի կամ անասնաբուժակի բոլոր կարգադրությունները: Զի կարելի անուշադրության մատնել, կամ հրաժարվել պատճառաբանելով «Մեր պապերը ե հայրերը այդպես չելին անում»: Զակետք ե լսել նաև զա-

նազան «Քիտուններին», վորոնք իրենց տպիտությամբ կարող են վնաս պատճառել:

Հոդ պիտի տանել, վոր վարակը չ'տարածի: Հիվանդ անասնատերը պարտավոր ե կատարելու իշխանության հրատարակած բոյոր փորչումները, վարակի դեպքում, պայքարելու ինդրում: Յեթե անասունը սատակում ե պետք ե հայտնել անասնաբուժին կամ անասնաբուժին և Պետապի գործակալին: Պատահում ե, վոր վորեվե պատճառով հնարավոր չե լինում գործակալին հայտնելու. այդ դեպքում նա անպայման պիտի հայտնի գյուղխորհրդին և այդ պիտի կատարել շատ շտապ, մի որվա ընթացքում, անկումից հետո,

ՍԱՏԱԿԱԾ ԱՆԱՍՈՒԻՆԻ ԱԿՏ ԿԱԶՄԵԼԸ.

Ապահովագրված անասունը սատակելու դեպքում, տեղում պիտի կազմել ակտ: Ակտը կազմվում ե վոչ ուշ 2 որից, սատակումի հետո: Բայց նոյեմբերի 1-ից մինչեվ ապրիլի 1-ը, ավելի ցուրտ ժամանակում, ակտը կարելի յի կազմել մինչեվ 4 որից:

Ինչո՞ւ յե սահմանվում այդպիսի կարգ:— + Ակտը կազմելու և անասունի անկման պատճառը պարզելու համար անհրաժեշտ ե զննել նրա դիակը: Յեթե անասունի դիակը արդեն քայլայվել է, անկման պատճառը վորչել անկարելի յե. իսկ ամառ ժամանակ դիակի քայլայումը, ավելի արագ ե կատարվում, քան թե ձմեռը:

Ո՞վ և կազմում ակտը:

Պետապի տեղական գործակալը, անասնաբուժը, կամ անասնաբուժակը, իսկ յեթե նրանք բացակայում են, կազմում ե գյուղխորհրդի նախագահը: Ակտ կազմելիս պետք ե ներկա լինին 2 վկաներ, վորոնք ազգական չեն սատակած անասնատիրոջը:

Անասնատերը պարտավոր ե ներկայացնել ակտ կազմողներին անասունի դիակը կամ դիակի մնացորդները, անկման վայրում: Սակայն լինում են դեպքեր, յերբ անկարելի յե ներկայացնել անասունի դիակը. որինակ անտառում յերբ գաղանները պատառութել են անասունին, այդ դեպքում ակտը կազմվում առանց անասունի դիակի:

ՎՆԱՍՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ.

Միելնույն ձեվով ակտը կազմվում ե թե պարտադիր կոպարայինի և թե լրացուցիչ ապահովագրության համար:

Յեթե ակտը գորեվե կասկած չի հարուցանում, ապա Պետապի գործակալը անմիջապես վճարում ե վնասը:

Կասկածի գեպքում ակտը գործակալը ուղարկում ե անասնաբուժին: Անասնաբուժը պետք ե տա իր յեղբակացությունը, թե հիվանդության բնույթի մասին և թե վճարվելու կամ մերժվելու մասին: Բայց մի քանի հազվագյուտ դեպքերում, յերբ անասնաբուժն ել չի

կարողանում վճռել հարցը, այդ դեպքում ակտը
ուղարկվում է Հայպետապի դրասենյակին ի
տնօրինություն:

Առբհրդային իշխանությունը բոլոր մի-
ջները ձեռք ե առնում, վորպեսզի վնասը
վճարվի անմիջապես առանց ձգձգվելու: Ող-
նությունը դժբախտության դեպքում միայն
այն ժամանակ ե լրի, յերբ հասնում ե իր ժա-
մանակին: Որինակ զարնան դաշտային աշխա-
տանքների սկզբին գյուղացու յեզր սատակել ե.
գյուղացու համար ամեն մի բոպեն թանդ ե,
յեթև նորը չ'գնի, ապա նրա դաշտերը չեն վար-
վի:

Նա ստիպված դլուխը թեքում ե կուրակին,
վերցնելով նրանից պարոք, մեծ զ%-ով:

Հաճախ գյուղացիները իրենց նամակնե-
րում դրում են, «Ձե Պետապի գործակալները
ուշացնում են վնասների վճարումը» գյուղացի-
ները դատում են այսպես: «Ել ինչ կարիք կա-
կտոր ուղարկելու անասնաբուժի յեղբակացու-
թյան, սատակեց կովը, գործակալը անմիջա-
պես պետք ե վճարի վնասը»:

Այդ դատողությունը սխալ ե և ահա թե
ինչու: Որինակ մի վորեվիք գյուղացի, կարող ե
մորթել իր կովը, միսր ծախել և գնալ գյուղ-
խորհրդին պահանջել վնասը, ակտում դրել տա-
րվ թե անասունը սատակել ե հիվանդությու-
նից: Հաճախ լինում են դեպքեր, վոր գյուղ-
խորհրդինախապահը կամ քարտուղարը համա-
ձայնում են ի՞նչ ե նշանակում այդ. այդ նշա-

նակում ե, վոր մի վորեվիք ստախոս ողուա-
կուանա, իսկ մյուս գյուղացիներից հավաքած
Պետապի գրամները կ'կորզեն Հասկանալի յե,
վոր նման դեպքերում գյուղացիները իրենք
պետք ե հայտնաբերեն այդ և իր ժամանակին
հայտնեն Պետապի գործակալին:

Յեթե հարեվանը խարեւության ճանապար-
հով ստանում ե ապահովագրական վարձատ-
րություն, չպետք ե կարծել, թե նա դրամը
ստանում ե պետպանձարկղից. իսկ պետպան-
ձարկղը հարուստ է: Փաստապես այդպիսի ան-
բարեխիզգ քաղաքացին, այդ գումարը ստա-
նում ե նույն գյուղացիների դրամներից:

Լինում ե և այսպես, վոր Պետապի գործա-
կալը ծուլությամբ կամ անփութությամբ հե-
տաձգում ե վնասի վճարումը: Վորպեսզի այդ
տեղի չունենա, գրասենյակը հետեւում ե վոր
գործակալը առանց ձգձգումների վճարի վը-
նասները: Իսկ յեթե դործակալը շարունակ
ձգձգում ե վնասների վճարումը, ապա գրա-
սենյակը ուղարկում ե իր տեսչին, վորը պետք
ե ուղղի բոլոր թերությունները և գործակալին
պատասխանաւության յենթալիքի:

Գործակալի բոլոր սխալ գործերի մասին
պիտի հայտնել Հայպետապին:

Առբհրդային իշխանությունը աշխատում
ե, լավացնելու և բարձրացնելու գյուղական
չքավորրին և միջակի տնտեսությունը:

Տնտեսութ. մեջ եական նշանակություն ունի
անասունը, վորը ձեռք բերելու համար, վոչինչ

չի խնայում գյուղացին: Բայց այդ բոլոր ջանքերը կարող են կորչել մի չարաբաստիկ որ, յերբ գյուղացու անասունը սատկում է հիվանդությունից կամ զժբաղտ պատահարից: Այս գեպքում նրան ոգնության ե գալիս Խորհրդացին իշխանությունը, վճարելով նրան վնասը: Գյուղացին կարող է այդ գումարին ավելացնել իր գումարը և նոր անասուն գնել:

Ապահովագրությունը կատարում է մի այլ լուրջ աշխատանք: Նախազդուշացնում ե հիվանդությունների գեպքում, ցուցմունքներ տալիս հիվանդությունից զեղծ պահելու: Վորպեսզի անասունները քիչ հիվանդանան, անհրաժեշտ են, սրսկումները, դեղորայք և գործիքներ: Այստեղ դարձյալ ոգնության ե գալիս Խորհրդացին պետական ապահովագրությունը և իր միջոցներից գումարներ հատկացնում այդ բոլորը գնելու համար:

Խորհրդացին իշխանությունը աշխատում է, վոր Պետապի գործակալը չդառնա անմատչելի ազա:

Պետապի գործակալը պետք ե լինի գյուղացու խորհրդատուն, նա պետք ե գյուղացիներին տա ապահովագրական գործի մասին բոլոր ցուցմունքները ու բացատրությունները, պետք ե հաճախ այցելի իր շրջանի բոլոր գյուղերը:

Ներկայումս գեռ ևս անասունների ապահովագրության գործը վերջնականապես չի բավարար: Եատ լավ կլիներ, յեթե իջեցնեյին

ապահովագները և բարձրացնեն ապահովագրական վարձատրության գումարը: Բայց այդ կախված է, անասունների անկման թվից և գյուղացիության բարեկեցությունից: Արինակ սատակելու թիվը մեծ և լինում, յեթե անասունը անկանոն է կերակրվում: Ինքը բնակչությունը շատ բան կարող է անել, անասունների խնամք տանելուն և լավ կերակրելուն:

Յերեան, 1927 թ.



Ց Ա Ն Կ

1. Առաջաբան	3
2. Խնչու համար պետք ե անասուն . ապահովագրություններ	5
3. Անասունների ապահովագրումը ցարի ժամանակ և հիմա	6
4. Պարտադիր և կամովոր ապահովագրություն	7
5. Անասունների պարտադիր ապահովագր. վճարումը	10
6. Զքափոր գյուղաց . տրվելիք ապահովագր. արտնություն	12
7. Ընկած անասունների համար վճարվելիք ապահով . վարձատրության չափը	15
8. Ի՞նչ է հարկավոր գիտենալ անասունների պարտադիր ապահովագրության մասին	17
9. Խորհրդային Միության անասունների բուժման գործում	20
10. Անասունների լրացուցիչ ապահովագրություն	21
11. Անասունների կոլլեկտիվ ապահովագրություն	26
12. Ի՞նչ պիտի անել անասունի հիվանդության դեպքում	27
13. Սառակած անասունի ակտ կազմելը	28
14. Վճառմերի վճարումը	29



44.235